

**Գևորգ Ս. Խուդինյան**  
*Պատմ. գիտ. դոկտոր*

**ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԱՎՈՐԱՍԻԱԿԱՆ ԵՎ  
ԱՐԵՎԵԼԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ – 20-ՐԴ  
ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ**

Մաս առաջին: Կուսակցությունների ձևավորման գործընթացն  
Արևելյան Եվրոպայում ու Առաջավոր Ասիայում  
1880–1890–ական թթ.\*

**Բանալի բառեր** – ՀՅ Դաշնակցություն, Արևելյան  
Եվրոպա, Առաջավոր Ասիա, երկրորդ շրջափուլ,  
պրոգրեսի «ազգայնացում», ազգային պատմու-  
թյուններ, «մարտահրավեր-պատասխան», Մակեդոն-  
իա, ռուսական նարոդնիկներ, երիտթուրքեր:

**1. Ուսումնասիրության արդիականությունը**

Ռուսական գործերի՝ Ուկրաինա մուտք գործելու հետևանքով ան-  
կասելիորեն ծավալվող աշխարհաքաղաքական տեղաշարժերի արդ-  
յունքում բացվում ու ընդլայնվում է ժամանակին Ռուսաստանյան, Օս-  
մանյան ու Ավստրոհունգարական կայսրությունների արանքում սեղմ-  
ված Արևելյան Եվրոպա կոչվող տարածաշրջանը, որի սահմանները  
խորհրդային տարիներին հասնում էին ԽՍՀՄ-ի, իսկ հետխորհրդային  
շրջանում՝ Ռուսաստանի արևմտյան սահմանագծին, մինչդեռ Եվրո-  
պայի աշխարհագրական բնագիծը Ուրալյան լեռնաշղթան է, իսկ քա-  
ղաքակրթականը՝ հեռավորարևելյան Վլադիվոստոկը:

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 12.06.2022:

Արդեն երրորդ համաշխարհային հիշեցնող ներկայիս պատերազմը սկզբունքորեն նոր կացություն է ստեղծել ոչ միայն Բալթիկ ծովից մինչև Բալկաններ ընկած տարածաշրջանում, այլև Սև ու Միջերկրական ծովերի ավազաններում, որտեղ տեղի է ունենում նախկին Ավստրոհունգարական ու Օսմանյան կայսրությունների հպատակ ժողովուրդների քաղաքական նախապատվությունների հստակեցումը: Քանի որ նման գործընթացներն արդեն բախում են նաև հարյուրամյակներ շարունակ նրանց հպատակության տակ պահած ներկայիս Ռուսաստանի ու Թուրքիայի դռները, վերջիններս նույնպես կանգնում են սեփական արժեքային ու քաղաքական ընտրությունը հստակեցնելու խնդրի առաջ: Սրանով Բալթիկ ծովից մինչև Միջերկրական ծովն ընկած ընդարձակ տարածաշրջանում ծավալվում է 20-րդ դարի սկզբներին այդ երեք կայսրությունների փլուզմանը հանգեցրած՝ ազգային ձգտումների բյուրեղացման նոր շրջափուլը, որը նաև դեպի Կասպից ծովի ավազան ու Պարսից ծոց տարածվելու միտումներ է դրսևորում:

Նոր ժամանակներում եվրոպական լուսավորականության գաղափարների տարածման և ազգային ու սոցիալական շարժումների ծավալման հետևանքով այս բոլոր տարածաշրջաններն արդեն մեկ անգամ դարձել են ազգ-պետությունների ձևավորման ու էթնիկական սահմանների հստակեցման գործընթացի մասնակիցները: Հերոսական ու զոհաբերական հայ ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ, որը դուրս եկավ Հայաստանի սահմաններից՝ դառնալով լուրջ խթան նաև հարևան երկրների ու ժողովուրդների զարթոնքի համար, մենք՝ հայերս, 19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի առաջին քառորդին ոչ միայն անցել ենք այդ կարևոր պատմական հանգրվանը, այլև դարձել դրա ծավալման գործընթացի յուրահատուկ թթխմորը: Արդեն այդ շրջափուլում հայ քաղաքական ընտրանին, ներկայացված լինելով ազգային կուսակցությունների, հիմնականում՝ ՀՅ Դաշնակցության միջոցով, առաջադեմ գաղափարների ու ծրագրերի, հեղափոխական պայքարի նոր մեթոդների տարածման առաջամարտիկի դեր է խաղացել ոչ միայն Ռուսաստանյան ու Օսմանյան կայսրություններում, այլև Կասպիականի ավերից մինչև Պարսից ծոցն ընկած տարածաշրջանում: Հայ ժողովրդի մի հատվածի՝ սեփական հայրենիքից դուրս բնակվելու իրողության հայելային արտացոլումը հանդիսացող այս

երևույթը, անշուշտ, միշտ չէ, որ նպաստել է հայ ազատամարտի ուժականության ամրապնդմանը, բայց այն ոչ միայն մեծապես խթանել է հարևան ու բարեկամ ժողովուրդների ազգային ինքնագիտակցության վերելքը, այլև դարձել Հայաստանի անկախացումից հետո միջպետական հարաբերությունների ձևավորման հիմք: Դրանց նախնական արտահայտությունները դեռևս Հայաստանի Հանրապետության գոյության շրջանում՝ 1918-1920 թվականներին Իրանի, Ռուսաստանի Հարավի կառավարության, Հունաստանի և այլ բարեկամ երկրների ու ժողովուրդների հետ սկիզբ առած հարաբերություններն էին: Սակայն քանի որ Առաջին աշխարհամարտից հետո այդ ժողովուրդների մի մասին միայն ազատություն բերած 1919-1920 թթ. Վերսալի, Սեն-ժերմենի, Նեյիի, Տրիանոնի ու Սևրի պայմանագրերին հաջորդեցին մեր տարածաշրջանի երկրներին Խորհրդային Ռուսաստանի ու քեմալական Թուրքիայի պարտադրած Մոսկվայի, Կարսի ու Լոզանի պայմանագրերը, այս գործընթացը 1920-ականների կեսերին ժամանակավորապես սառեցվեց՝ սպասելով ավելի բարենպաստ աշխարհաքաղաքական իրողությունների:

Երկրորդ աշխարհամարտին նախորդած Մոլոտով-Ռիբենտրոպ խորհրդա-գերմանական գործարքով ու դրան հաջորդած Թեհրան-Ցալթա-Պոտսդամ համաձայնագրերով նույնը տեղի ունեցավ նաև Արևելյան Եվրոպայի պարագայում: Բայց անգամ ԽՍՀՄ փլուզումից հետո տարածաշրջանի ժողովուրդներին պարտադրված կեղծ արժեքների ու արհեստական սահմանների ռևիզիան Արևելյան Եվրոպայի անձուկ սահմաններից այն կողմ չանցավ: Եվ միայն ներկա հիբրիդային աշխարհամարտն է դառնում Բալթիկ ծովից մինչև Սև ու Միջերկրական ծովերն ընկած ընդարձակ տարածաշրջանի խորքային վերաձևման սկիզբը: **Սրանով համաշխարհային պատմության գծային ընթացքն առանձին տարածաշրջաններում իր շրջափուլային բարդ փոխակերպումների միջոցով իրականացնում է պրոգրեսի «ազգայնացման» գործառույթները:**

19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի առաջին քառորդին համաշխարհային պատմական այս առաքելության անմիջական իրականացնողները տարածաշրջանի ժողովուրդների՝ ազգային ու ընկերային ազատագրության տեսլականով առաջնորդվող քաղաքական կուսակցություններն էին, որոնք անկախության ձեռքբերումից հետո ձևավոր-

րեցին իրենց երկրների քաղաքական համակարգերը: Ու թեև դրանց գերակշիռ մասը զարմանալիորեն նման էր իրար անկախ պետականության երազանքով ու ընկերային արդարության սոցիալիստական կամ սոցիալ-դեմոկրատական իդեալներով, բայց Ռուսաստանում բոլշևիկյան հեղաշրջման, Թուրքիայում քեմալական շարժման և ապա գերմանական ֆաշիզմի ծանր հարվածների հետևանքով նրանց մի մասը հայտնվեց արտասահմանում, իսկ մյուսները ստիպված էին հրաժարվել անկախության ու դեմոկրատիայի իդեալներից և կուլ գնալ ամբողջատիրական ու ֆաշիստական վարչակարգերին:

ԽՍՀՄ փլուզումից հետո այս համակարգաստեղծ կուսակցություններից շատերը վերականգնեցին իրենց իշխանությունը արևելաեվրոպական երկրներում, իսկ հետխորհրդային տարածքում փորձեցին դառնալ այն քաղաքական համակարգերի մասը, որոնք դեռևս չէին ազատվել անցյալի ծանր ու նվաստացուցիչ բեռից: Ուստի վերջին երեսնամյակում հետխորհրդային տարածքում ազգ-պետության իդեալի վերագարթոնքը հաջողություն բերեց միայն այն երկրներին, որոնք կարողացել էին ազատվել նախկին ամբողջատիրական վարչակարգերի բացահայտ ու ստվերային լծակներից:

Ներկա հիբրիդային աշխարհամարտը խոստանում է դառնալ ոչ միայն Բալթիկ ծովից մինչև Միջերկրական ու Կասպից ծովերն ընկած ընդարձակ տարածաշրջանների արտաքին սահմանների վերաձևման, այլև դրանց մաս կազմող երկրների քաղաքական համակարգերի ներքին՝ արժեքային բովանդակության առողջացման սկիզբը:

Նման պայմաններում՝

**նախ**՝ համաժամանակյա (սինքրոնիկ) հարթության վրա գիտական նոր ուսումնասիրության կարիք է զգում արևելաեվրոպական ու առաջավորասիական երկրների քաղաքական համակարգերի հիմքերը դրած կուսակցությունների 19-րդ դարի վերջերի ու 20-րդ դարի առաջին քառորդի պատմությունը՝ որպես մեկ ամբողջություն,

**երկրորդ**՝ տարաժամանակյա (դիաքրոնիկ) հարթության վրա զգացվում է Բալթիկ ծովից մինչև Միջերկրական ընկած ընդարձակ տարածաշրջանի երկրների նախկին ու ներկա քաղաքական համակարգերի պատմահամեմատական քննության կարիքը,

**երրորդ**՝ այս երկրների ազգային պատմությունների քննության դիտանկյան հստակեցման համար առաջնային է դառնում ազգ-պե-

տությունների ձևավորման դարաշրջանում դրանցում համակարգատեղծ գործառույթներ իրականացրած քաղաքական կուսակցությունների առանձնահատուկ դերակատարության առանձնացումն ու նորովի ուսումնասիրությունը:

Պատճառն ակնհայտ է. դրանցից յուրաքանչյուրը հելլենների կողմից 19-րդ դարի սկզբներին հիմնված «Ֆիլիկի հեթերիայի» նման առաջամարտիկի դեր է խաղացել իր երկրի անկախության ու ինքնիշխանության ձևավորման ճանապարհին: Ուստի հայերիս պարագայում հարևան երկրների ու ժողովուրդների կուսակցական-քաղաքական համակարգերի հետ 19-րդ դարի վերջերի ու 20-րդ դարի առաջին քառորդի կապերի ու հարաբերությունների ողջ հանրագումարը հնարավոր է ուսումնասիրել միայն հայ ազատամարտի առաջատար ուժի՝ ՀՅ Դաշնակցության միջազգային օրակարգը քննելու միջոցով, որին հետագայում կարող է գումարվել նաև հայկական մյուս քաղաքական ուժերի ու անհատների ավելի սահմանափակ կապերի ուսումնասիրությունը:

Նման **գլխաթեմայի** արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ ներկայումս, փաստորեն միևնույն պատմաքաղաքական իրողության երկրորդ շրջափուլի ծավալման պայմաններում, Սև ու Միջերկրական ծովերի ավազանում կասկածի տակ են դրվում Առաջին աշխարհամարտի, իսկ Արևելյան Եվրոպայում՝ Երկրորդ աշխարհամարտի արդյունքները: Ուստի բնական է, որ այս շրջափուլը կրում է ոչ թե Երկրորդ, այլ Առաջին աշխարհամարտի հետևանքով ձևավորված իրողությունների գերակա ազդեցությունը: Որովհետև Երկրորդ աշխարհամարտը սուկ ամրագրել է Թեհրան-Յալթա-Պոտսդամով ավարտված գերուժերի դիմակայության արդյունքները, մինչդեռ Առաջին աշխարհամարտի հետևանքով Ռուսաստանյան ու Օսմանյան կայսրությունների փլուզումից հետո Մեծ Բրիտանիայի օրհնությամբ առանձին երկրների ու ժողովուրդների քաղաքական ձգտումների մեջ ձեռք է բերվել լոգանյան խախուտ կոնսենսուսը, որը հետագայում փաստորեն չի շոշափել Երկրորդ աշխարհամարտի երկու հիմնական դերակատարների՝ ԱՄՆ-ի ու ԽՍՀՄ-ի (Ռուսաստանի) անմիջական շահերն այնքան ժամանակ, քանի դեռ վերջիններից մեկնումեկը վճռական գերակշռություն չէր ստացել մյուսի հանդեպ ուժերի գլոբալ դասավորության համակարգում: Բրիտանական կայս-

րության ու ԽՍՀՄ փլուզումից հետո՝ գլոբալիզացիայի դարաշրջանում, հենց նման գերակշռության փաստն է անխուսափելի դարձրել ներկա, արդեն երրորդ՝ հիբրիդային աշխարհամարտը Բալթիկ ծովից մինչև Միջերկրական ու Կասպիական ծովերն ընկած ընդարձակ տարածաշրջանների վերաձևման համար: Իսկ դա նշանակում է, որ առաջիկայում այս բոլոր երկրները թևակոխելու են մի յուրահատուկ՝ քաղաքակրթական սինթեզի դարաշրջան Առաջին աշխարհամարտի հետևանքով սկիզբ առած միտումների գերակա ազդեցության պայմաններում: Ուստի նախկինում հայերիս ունեցած դերակատարության ու դերակատարների համակողմանի ուսումնասիրությունը մեր առջև բացելու է անցյալում եղած կապերի ու հարաբերությունների մի այնպիսի բարդ ու հարուստ խճանկար, որը կարող է ծառայել իբրև ճանապարհային քարտեզ՝ ապագա քաղաքական հարաբերությունների **նոր արահետներ** բացելու և ավելի խորքային ընդհանրություններ ու շահեր բացահայտելու կամ նորովի ձևավորելու համար:

## 2. «Մարտահրավեր-պատասխանի» աշխարհագրությունը

1880-1890-ական թթ. սահմանագիծը բեկումնային պահ էր 19-րդ դարում համաեվրոպական թատերաբեմում ծավալված մեծ տերությունների մրցակցության մեջ: Առաջին աշխարհամարտի նախապատրաստման ավելի քան 20-ամյա գործընթացի սկիզբը դարձած 1889-1891 թթ. խորքային աշխարհաքաղաքական վերադասավորումներն արդեն քննության են ենթարկվել խորհրդային<sup>1</sup> և հայրենական<sup>2</sup> պատմագիտության կողմից:

**Ցույց է տրվել**, որ դրանց հետևանքով դրվեցին Քառյակ դաշինքի ու Անտանտի հիմքերը, ինչին նպաստեցին հետբիսմարկյան Գերմանիայի ու Ռուսաստանի շահերի տարանջատմանն ուղղված Մեծ Բրիտանիայի նուրբ ու բազմաբայլ կոմբինացիաները, որոնք նույն պատմաշրջանում հանգեցրին ռուս-ֆրանսիական դաշինքի ձևավորմանը:

1 Տե՛ս **Хвостов В. М.**, Внешняя политика России от окончания Берлинского конгресса до заключения франко-русского союза (1878-1893 гг.), в кн. «Проблемы истории внешней политики России и международных отношений в конце 19 - начале 20 в.», «Избранные труды», М., изд-во «Наука», 1977, էջ 174-263:

2 Տե՛ս **Խուրիճյան Պ.**, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., 2006, էջ 139-154:

**Ցույց է տրվել**, որ այդ խորքային տեղաշարժերի հետևանքով մի պահ իրական էր թվում անգամ ռուս-թուրքական նոր պատերազմի բռնկումը, սակայն մեծն Բիսմարկի 1890 թ. մարտյան հրաժարականից հետո Ռուսաստանը սկսեց լրջորեն անհանգստանալ 1877-1878 թթ. պատերազմի ռազմատուգանքների դիմաց իրեն էրգրումի վերագրավման տարբերակն առաջարկող Մեծ Բրիտանիայի տարօրինակ «հյուրասիրությունից»:

**Ցույց է տրվել** նաև, որ համաեվրոպական թատերաբեմում արձանագրված ժամանակավոր սրացումներն իրենց անմիջական անդրադարձն ունեցան Օսմանյան կայսրության հետագա ճակատագրով հետաքրքրված գրեթե բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև՝ հայերի ազգային-քաղաքական ձգտումների վրա, ուստիև մի պահ բուռն վերելք ապրած հայ ազատամարտի հորձանուտում ծնվեց շատ կարճ ժամանակում նրա առաջատար ուժը դարձած ՀՅ Դաշնակցությունը:

Բայց հենց այստեղ է, որ մեր ազգային պատմությունը, պարփակվելով հետագա իրադարձությունների խիստ անձուկ ժամանակային ու տարածական սահմաններում, մոռացել է նայել մեր շուրջը և գիտակցել այն իրողությունը, որ ճիշտ նույն ժամանակաշրջանում ազգային-ազատագրական պայքարն ու ազգ-պետությունների ձևավորման գործընթացները ծավալվում էին ոչ միայն Օսմանյան, այլև Ռուսաստանյան ու Ավստրոհունգարական կայսրություններում՝ ընդգրկելով Ֆինլանդիայի, Մերձբալթյան երկրների, Լեհաստանի, Հունգարիայի, Ուկրաինայի, Բուլղարիայի, Մակեդոնիայի ու Հարավային Կովկասի տարածքները, որոնցում նույնպես ձևավորվում էին այն քաղաքական ուժերը, որոնք համակարգաստեղծ դերակատարություն ստանձնեցին Արևելյան Եվրոպայի ու Առաջավոր Ասիայի երկրներում:

Այսինքն՝ լուսաբանելով Առաջին աշխարհամարտի նախապատրաստման սկիզբը դարձած 1889-1891 թթ. վերադասավորումների ազդեցությամբ հայ իրականության մեջ ծնունդ առած առանցքային ուժի՝ ՀՅ Դաշնակցության նախապատմությունը՝ մինչ օրս անտեսել ենք մեր շուրջը սինքրոն կերպով ծավալված նույնարվանդակ պատմաքաղաքական գործընթացները: Ներկայումս՝ որոշակի հեռավորությունից, դրանք խիստ տարօրինակ են թվում իրենց ժամանակային չափորոշիչների նույնականության ու տարածական սահմանների հստակու-

թյան պատճառով, քանզի նույն՝ 1889–1891 թթ. ընթացքում ու դրանցից անմիջապես հետո սեփական ազգային ձգտումներն արտացոլող համակարգաստեղծ կուսակցություններ ու կազմակերպություններ են հիմնել գրեթե բոլոր պետականազուրկ ժողովուրդները, որոնք մոտ երկու տասնամյակ անց հայտնվեցին Առաջին աշխարհամարտի հորձանուտում: Հետագայում պատմությունը դավադրությունների տեսության անձուկ շրջանակներում քննող հետազոտողները թերևս պետք է մեկ ընդհանուր կախարդական ձեռք փնտրեին այս արտաքուստ միայն տարօրինակ համընկնումների հետևում: Բայց երբ ժամանակի հեռավորությունից պատմական իրադարձությունները քննում ենք դրանց դիտարկման համաժամանակյա ու տարաժամանակյա հարթությունների հատույթում, պարզ է դառնում թոյնբիական հայտնի՝ «**մարտահրավեր-պատասխան**» սկզբունքով ծավալված նման զարգացումների առարկայականությունը (օբյեկտիվությունը): Ուստի ներկա հրապարակման առաջին մասում նախ կփորձենք բացահայտել 1880–ական թթ. վերջերին – 1890–ական թթ. սկզբներին միանգամից երեք՝ Ռուսաստանյան, Ավստրոհունգարական ու Օսմանյան կայսրությունների շահերի բախման սուր կետերում ազգային ու սոցիալական շարժումների դրոշակակիրը դարձած քաղաքական ուժերի խճանկարը:

Օսմանյան կայսրության հետագա ճակատագրով հետաքրքրված՝ եվրոպական կրթություն ստացած թուրքերի նոր սերունդը, որը «թանգիմաթի» դարաշրջանի վերջում հայտնի դարձավ «երիտասարդ թուրքեր» ընդհանուր և խիստ առաձգական անվամբ, առաջին անգամ հենց 1889–1891 թթ. աշխարհաքաղաքական վերադասավորումների շրջանում սկսեց կասկածի տակ առնել օսմանիզմի համադրույթը, որի հիմքում ընկած էր ոչ թե էթնիկ, այլ կրոնական ու մշակութային ընդհանրության սկզբունքը: Ուստի բնական է, որ հենց այս շրջանում է սաղմնավորվում օսմանցիների փոխարեն թուրքերի՝ որպես առանձին էթնոսի շուրջ կայսրության հոմոգենության ձևավորման գաղափարը, որը դարերի խորքը հասնող պատմություն ու կարծրացած ինքնություններ ունեցող մյուս ժողովուրդների, մանավանդ քրիստոնյաների գոյության պարագայում շատ կարճ ժամանակ անց վերածվելու էր նրանց դուրսմղման ու բնաջնջման նպատակադրման:



1889-1891 թթ., երբ «Ելդըզ քյոշք»-ում հավաքված Օսմանյան կայսրության վերնախավը մտմտում էր ազգային զարթոնք ապրող հայերի բնաջնջման եղանակների շուրջ, նրա նոր՝ եվրոպականացած սերունդը՝ ի դեմս երիտթուրքերի, ձևավորում էր հետագայում այդ խնդրի լուծումը ծրագրային առաջադրանքի վերածած քաղաքական ուժը՝ թուրք ազգայնական-հեղափոխականների «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը: Այն հիմնադրվել է 1889 թ. մայիսի 21-ին որպես «Օսմանյան միասնության ընկերություն», իսկ կարճ ժամանակ անց իր փարիզյան խմբի հետ միավորվելու հետևանքով վերանվանվել է «Միության և առաջադիմության օսմանյան ընկերություն» կամ պարզապես «Միություն և առաջադիմություն»: Վերջինս նույն քաղաքական մարտահրավերի՝ ազգ-պետությունների ձևավորման ու էթնիկական սահմանների հստակեցման գործընթացի ընկալման փորձ էր կայսրությունը պահպանելու խնդիր ունեցող ազգի դիտանկյունից: Ուստի երիտթուրքական շարժման գաղափարախոսներին ի սկզբանե հետաքրքրում էին եվրոպական փիլիսոփայական մտքի այն ձեռքբերումները, որոնք հիմնվում էին տեսակների փոխադարձ ոչնչացման ու գոյության կոլի սոցիալ-դարվինիստական մեկնակետերի վրա<sup>3</sup>: Դրանք, հետագայում՝ գերմանական ֆաշիզմի վերելքի դարաշրջանում հարստացվելով վերջինիս մարդատյաց գաղափարներով, Երկրորդ աշխարհամարտի ընթացքում հանգեցրին «գորշ գայլերի» գաղափարախոսության, իսկ փոքր-ինչ ավելի ուշ քաղաքական շարժման ձևավորմանը: **Սրանով թոյնբիական «մարտահրավեր-պատասխան» սկզբունքը խորքային ճեղքվածք էր բացում պրոգրեսի հակադիր ընկալումներում, որն իրականում ոչ թե քրիստոնեության ու իսլամի քաղաքակրթական ելակետերի բախման հետևանք էր, այլ իսլամի չափավոր աշխարհիկացումով առաջ եկող դատարկությունը քոչվոր թյուրքերի նախնական՝ տոհմացեղային-շամանական հեթանոսությանը լցնելու արդյունք:**

Անշուշտ, տվյալ պատմաշրջանում ՀՅ Դաշնակցության ու թուրքական լծի դեմ պայքարող մյուս քաղաքական ուժերի հարաբերությունները Օսմանյան կայսրության քաղաքական կյանքի առանց-

3 Ավելի մանրամասն տես **Գալուստյան Ռ.**, Սոցիալ-դարվինիզմը երիտթուրքերի աշխարհայացքում, «Վեմ», Եր., 2020, N 4, էջ 253-273:

քային սուբյեկտների հետ երիտթուրքերով չեն սկսվել ու նրանցով էլ չեն սահմանափակվել: Մանավանդ Օտտոմանյան բանկի գրավումից հետո ինքը՝ սուլթան Աբդուլ Համիդը, բազմիցս հայ բարձրաստիճան բանագնացներ է ուղարկել Ժնև՝ ՀՅԴ ղեկավարության հետ որոշակի կապեր հաստատելու համար, բայց ամեն անգամ ձախողվել է:

Ավելի վաղ՝ 1890-ականների կեսերից, Կ. Պոլսում գտնվող ՀՅԴ գործիչների հետ կապեր ու հարաբերություններ են ձևավորել հայերի նման (Բեռլինի տրակտատի 23-րդ հոդված) բարենորոգումների անպտուղ խոստումներ ստացած՝ Մակեդոնիայի ազատագրության համար պայքարող կազմակերպություններն ու անհատները: Բուլղար ժողովրդի հերոսական ազատամարտի, իսկ հետագայում Բուլղարիա պետության ուժեղ ազդեցությունը կրող Մակեդոնիայի սլավոնների ազգային-ազատագրական պայքարի վերելքը նույնպես ճշգրտորեն համընկել է 1889-1891 թթ. աշխարհաքաղաքական վերադասավորումների դարաշրջանին՝ հենց 1890-ականների սկզբներին Կ. Պոլսում առաջ բերելով ազգային մշակույթի զարգացման, իսկ փոքր-ինչ ուշ՝ 1893 թ., արդեն լիարժեքորեն ազգային-հեղափոխական նպատակներ ունեցող և բուն Մակեդոնիայի տարածքում ընդհատակյա պայքար ծավալող Ներքին մակեդոնական հեղափոխական կազմակերպությունը (ВМРО), որը 1905 թ. վերանվանվեց Ներքին մակեդոնա-օդրինյան հեղափոխական կազմակերպության (ВМОРО)<sup>4</sup>: Իսկ Բուլղարիայում 1895 թ. ձևավորված Բարձրագույն մակեդոնա-օդրինյան կոմիտեն փորձեց մակեդոնական շարժումը կապել Բուլղարիայի իշխանությունների՝ Մակեդոնիայի ու Թրակիայի (Օդրինյան երկրամասի) հանդեպ ունեցած հավակնությունների հետ, բայց, չնայած դրա համար որոշակի պատմական հիմքի առկայությանը, այն հիմնականում ծավալվում ու ընդարձակվում էր որպես Օսմանյան կայսրության բալկանյան տիրույթների մնացորդացի ազատագրմանն ուղղված ինքնաբուխ շարժում, որի նպատակները համահունչ էին նույն կայսրության հյուսիս-արևելքում անհավասար պայքարի ելած հայ ազատամարտիկների առաջադրանքներին:

4 Ст'и Лабаури Д. О., Болгарское национальное движение в Македонии и Фракии в 1894-1908 гг.: идеология, программа, практика политической борьбы, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Екатеринбург, 2007:

Դրան զուգահեռ՝ Մակեդոնիայի ազատագրության և ընդհանրապես՝ հարավսլավոնական ժողովուրդների շարքում մակեդոնական ինքնության բյուրեղացման խնդիրը միաձուլվում, իսկ հաճախ էլ բախվում էր ոչ միայն Մեծ Բուլղարիայի ու Մեծ Սերբիայի քաղաքական նախագծերին, այլև 19-րդ դարի սկզբներին անկախացած Հունաստանում արդեն 1844 թ. Իոաննիս Կոլետիսի ազդարարած «Մեգալի իդեայի» («Մեծ գաղափար») աշխարհագրական ու կրոնամշակութային սահմաններին<sup>5</sup>: Ընդ որում, Մեծ Սերբիայի քաղաքական նախագիծը նույնպես հրապարակվել է նույն՝ 1844 թ., Իլյա Գարաշանինի կողմից: Իսկ «Մեգալի իդեայի» կենսագործման խնդրի շրջագծում հույն հայրենասերների ստեղծած քաղաքական ուժերի կազմում գործել են նաև մակեդոնացիներ, ալբանացիներ և Միջերկրական ծովի Կրետե, Կիպրոս և այլ կղզիների ազատագրման համար պայքարող հույներ: Դրանցից էր, մասնավորապես, «Արևելյան Դաշնակցությունը», որն իր ներկայացուցիչներն ուներ նաև Հունաստանի կառավարական շրջանակներում: Վերջինիս հետ դեռևս «Հայ Յեղափոխականների Դաշնակցության» գոյության շրջանում՝ 1891–1892 թթ., որոշակի հարաբերություններ էին հաստատել հայ ազատամարտի գործիչները, հիմնականում՝ հնչակյանները:

Բալկաններից ու Արևմտյան Հայաստանից հետո 1889–1891 թթ. աշխարհաքաղաքական վերադասավորումների ազդեցությամբ ծնունդ առած հակամարտությունների հաջորդ խոշոր օջախը պատմական Գալիցիան էր (Արևմտյան Ուկրաինա), որը, տվյալ պատմաշրջանում որպես Գալիցիայի ու Լյուդոմերիայի երկրամաս գտնվելով Ավստրո-հունգարական կայսրության կազմում, դարձել էր մի կողմից իր նախկին տերերի՝ լեհերի, իսկ մյուս կողմից՝ նրանց հակադրվող ռուսիների (ուկրաինացիների) ազգային ձգտումների բախման հարթակը: Առաջին միտումի հիմնական կրողը 1890–ական թթ. սկզբների հանգրվանային քաղաքական գործընթացի հետևանքով ձևավորված «Լեհական սոցիալիստական կուսակցությունն» էր (PPS): Մինչ այդ՝ 1890 թ., ստեղծվել էր Իգնացի Դաշինակու (հետագայում՝ Երկրորդ Ռեչ Դոսպոլիտայի ժամանակավոր կառավարության վարչապետ) «Գալիցիական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը», որը 1892 թ.

---

5 Տե՛ս **Петрунина О. Е.**, «Великая идея» и геополитическая ситуация на Балканах на рубеже xx-xxi веков, [updates@academia-mail.com](mailto:updates@academia-mail.com) (մուտք 12.06.2022):

Լվովում (Լեմբերգ) կայացած իր համագումարում վերածվեց «Գալիցիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության», իսկ 1890-ական թթ. երկրորդ կեսին՝ «Գալիցիայի և Սիլեզիա-Ցեշինի լեհական սոցիալ-դեմոկրատական կուսակցության»:

Այն բանից հետո, երբ 1892 թ. նոյեմբերին Փարիզում հավաքված ազգային-սոցիալիստական ուղղվածություն ունեցող լեհական չորս կազմակերպությունները հիմնում են Լեհական սոցիալիստների արտասահմանյան միությունը, ծանրության կենտրոնը տեղափոխվում է ազգային ուղղվածություն ունեցող ձախակողմյան ուժերի համախմբման հարթություն: Ուստի մեկ տարի անց՝ 1893 թ., Լեհաստանում ընդհատակյա պայմաններում կայացած համագումարում հիմնվում է 19-րդ դարի վերջերի ու 20-րդ դարի առաջին քառորդի լեհական իրականության համակարգաստեղծ քաղաքական ուժը՝ «Լեհական սոցիալիստական կուսակցությունը», որն առաջադրեց անկախ հանրապետության վերականգնման ծրագրային պահանջը: Շուտով ձևավորվեց նաև այդ կուսակցության մարտական թևը, որն աչքի ընկավ ցարական ոստիկանության ու պաշտոնյաների դեմ կազմակերպած մի շարք աղմկահարույց ահաբեկչական ակտերով: Դրան հակառակ, Լիտվայի սոցիալ-դեմոկրատիայի հետ միավորվելով (աչքի առաջ ունենալով պատմական Ռեչ Պոսպոլիտայի գաղափարը), PPS-ից առանձնացավ ինտերնացիոնալիստական պլատֆորմ որդեգրած «Լեհաստանի ու Լիտվայի սոցիալ-դեմոկրատիան», որը բյուրեղացավ փոքր-ինչ ավելի ուշ՝ 1900 թ. հունվարին, Մինսկում կայացած համագումարում<sup>6</sup>:

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին (1906 թ.) PPS-ը կրկին պառակտվեց ազգայնականների (հեղափոխական ֆրակցիայի) և, այսպես կոչված, «լիցայի», այսինքն՝ ձախակողմյան-ինտերնացիոնալիստների, և հենց առաջիններն էին, որ իրենց հայտնի առաջնորդ Յուզեֆ Պիլսուդսկու գլխավորությամբ դարձան Լեհաստանի անկախության ու լեհական հողերի միավորման գործի առաջամարտիկները: Ուստի PPS-ը՝ որպես համալեհական կուսակցություն, իր կառույցները ձևավորեց ինչպես Սիլեզիայում ու Պրուսիա-

6 Ավելի մանրամասն տես **Залевский К.**, Национальные партии в России: Начало 20-ого века: Польша. Прибалтийский край. Литва. Украина. Кавказ. Еврейские партии, издание второе, М., URSS, 2017: Տես նաև այս աշխատության մասին մեր գրախոսությունը՝ **Խուդինյան Պ.**, Կազմի՞ր Զալևսկի, Ազգային կուսակցությունները Ռուսաստանում, «ՎԷՎ», Եր., 2017, N 2, էջ 208-213:

յում, այնպես էլ Գալիցիայում, որտեղ հետագայում հիմնեց նաև մարտիկների պատրաստման դպրոց: Սրանով Ավստրո-Հունգարիայի տիրապետության տակ գտնվող Գալիցիան դարձավ լեհական ու նոր միայն ծնունդ առնող ուկրաինական ազգայնականության բախման թատերաբեմը, ընդ որում՝ այդ ամենի հանդեպ ինչպես պաշտոնական Վիեննայի, այնպես էլ Ս. Պետերբուրգի երկակի մոտեցումների պայմաններում: Եթե առաջինը փորձում էր հավասարակշռել երկու ազգերի հավակնությունները՝ Գալիցիայում իր տիրապետությունը պահպանելու համար, ապա երկրորդը մի կողմից աջակցում էր Արևմտյան Ուկրաինայի ռուսիաներին, իսկ մյուս կողմից սահմանափակում էր ուկրաինական լեզուն ու մշակույթը իր տիրապետության տակ գտնվող, այսպես կոչված, «մալոռուսական նահանգներում»: Այդ իրողությունն էր պատճառը, որ ուկրաինացիների համար հենց Գալիցիան դարձավ ազգային ինքնության բյուրեղացման ու ազգային-ազատագրական պայքարի կենտրոնը: Սրանում մեծ էր 19-րդ դարի վերջերին Գալիցիայում ակտիվ գործունեություն ծավալած ուկրաինացի մտածողների ու գրողների՝ Միխայլո Դրագոմանովի, Իվան Ֆրանկոյի և մյուսների դերը: Ուստի պատահական չէ, որ **1890 թ. հոկտեմբերի 4-ին** ուկրաինացի ականավոր մտածող ու հրապարակախոս Միխայլո Դրագոմանովի գաղափարների ազդեցությամբ հենց Գալիցիայում է ստեղծվել Իվան Ֆրանկոյի ու Միխայլո Պավլիկի գլխավորած ուկրաինական առաջին ազգային կուսակցությունը՝ «Ռուս-ուկրաինական<sup>7</sup> ռադիկալ (արմատական) կուսակցությունը», որը շուտով վերանվանվեց «Ուկրաինական ռադիկալ կուսակցություն»: Սակայն Միխայլո Դրագոմանովի մահվանից հետո (1895 թ.) դրա կազմում ընդգրկված մարքսիստներն ու արմատականները հեռանում են, և մնում են միայն ուկրաինացի սոցիալիստ-նարոդնիկները, որոնք ակտիվորեն մասնակցում են Ավստրո-Հունգարիայում ծավալված խորհրդարանական ընտրապայքարներին: Իսկ ահա հեռացողները հիմնում են «Ուկրաինական սոցիալ-դեմոկրատական» և «Ուկրաինական ազգային-դեմոկրատական» կուսակցությունները:

---

7 «Ռուս» և «ռուսին» հասկացություններն այստեղ գործածվել են «ուկրաինացի» իմաստով, ինչպես ուկրաինական պատմագրության դասական Միխայլո Գրուշևսկու «Ռուսիա-Ուկրաինայի պատմությունը» տասհատորյակում:

Այս իրադարձություններից երկու ամիս անց՝ 1890 թ. դեկտեմբերի 7-8-ին, Ֆրիդրիխ Էնգելսի հետ նամակագրության մեջ գտնվող Պոլ Գաբոր Էդելմանը հիմնում է «Հունգարիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը»: Իսկ 1890 թ. ընթացքում Բուլղարիայում ձևավորված խմբակների միավորմամբ 1891 թ. հուլիսին հիմնվում է «Բուլղարիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը»:

Այսպիսով՝ Արևելյան Եվրոպայում և Առաջավոր Ասիայում տեղի ունեցած ազգային կուսակցությունների ձևավորման համաժամանակյա գործընթացն ուներ հետևյալ պատկերը.

1889 թ. մայիսի 21՝ «Օսմանյան միասնության ընկերություն», ապա՝ «Միություն և առաջադիմություն»,

1890 թ. հուլիս-օգոստոս՝ «Հայ Յեղափոխականների Դաշնակցություն»,

1890 թ. հոկտեմբերի 4՝ «Ուկրաինական ռադիկալ (արմատական) կուսակցություն»,

1890 թ. դեկտեմբերի 7-8՝ «Հունգարիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն»,

1891 թ. հուլիս՝ «Բուլղարիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն»,

1892 թ.՝ վրացական «Մեսամե դասի»,

1893 թ.՝ «Լեհական սոցիալիստական կուսակցություն»,

1893 թ.՝ Ներքին մակեդոնական հեղափոխական կազմակերպություն (BMPO),

1893 թ.՝ «Ավստրիական քրիստոնյա-սոցիալական կուսակցություն»,

1894 թ.՝ «Երիտֆիննական կուսակցություն»,

1895 թ.՝ Գալիցիայի լեհերի «Գյուղացիական կուսակցություն»,

1896 թ.՝ «Լիտվական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն»,

և վերջապես՝

1897 թ.՝ Լիտվայի, Լեհաստանի ու Ռուսաստանի հրեական համընդհանուր բանվորական միություն՝ ԲՈՒՆԴ: Վերջինս ՀՅ Դաշնակցության նման ցանցային կառույց ուներ և գործում էր ողջ կայսրությունում սփռված հրեական համայնքներում: Դա է պատ-

ճառը, որ ինչպես ԲՈՒՆԴ-ի և ՀՅ Դաշնակցության, այնպես էլ մերձ-բալթյան և լեհական առաջատար կուսակցությունների ճանապարհ-ները հատվեցին հետագայում՝ Ռուսական առաջին հեղափոխու-թյան տարիներին:

### 3. ՀՅԴ կապերն ու հարաբերությունները ցարական Ռուսաստանի և Օսմանյան կայսրության քաղաքական ուժերի հետ 1890-1897 թթ.

Արևելաեվրոպական ու առաջավորասիական քաղաքական ու-ժերի ու գործիչների հետ ՀՅԴ հարաբերությունների մի ամբողջ շղթայի բացահայտումը սկսելուց առաջ հարկ է հիշեցնել, որ կայս-րությունների փլուզման ու ազգ-պետությունների ձևավորման դա-րաշրջանում փոխվել էին հայկական ազգային շահերի հիմնական կրողները: Ուստի ամենևին էլ չհակադրվելով Հայաստանյայց առա-քելական եկեղեցուն՝ աշխարհացրիվ հայ իրականությունը ներկա-յացնող նոր՝ կուսակցական կառույցներն ու դրանց առաջնորդները ոչ միայն համախմբում էին արտերկրի հայությանը, այլև հանդես էին գալիս իբրև ապագա անկախ Հայաստանի անպաշտոն ներկա-յացուցիչներ: Նրանց ջանքերով ու նվիրումով բացված քաղաքա-կան կապերի արահետները հետագայում՝ Հայաստանի անկախու-թյան կորստից հետո, նույնպես շարունակել են ծառայել ազգային նպատակների իրականացմանը: Դա է պատճառը, որ ազատա-մարտի առաջատար ուժը՝ ՀՅԴ-ն է ռուսական ու եվրոպական (այժմ՝ արևմտյան) քաղաքական ուժերի շրջանում որոշակի հանգրվաններով ներդրել ինքնավար Հայաստանի գաղափարը: Դա իրականացվել է ռուսական նարդնիկության, իսկ հետագա-յում՝ 20-րդ դարասկզբին, նրանից ծնունդ առած հեղափոխական ու լիբերալ ուժերի հետ Քրիստափոր Միքայելյանի ու Ժնևում տարի-ներ շարունակ հարաբերական աշխատանքներ իրականացրած «Դրոշակ»-ի հիմնադիր Ռոստոմի, Շվեյցարիան իր երկրորդ հայրենիքը դարձրած Հոնան Դավթյանի, վերջիններիս գործը Փա-րիզում ու եվրոպական այլ մայրաքաղաքներում շարունակած Հով-հաննես Լոռու-Մելիքյանի ու Միքայել Վարանդյանի, իսկ Հայաստա-նի անկախության շրջանում՝ այդ կարևոր աշխատանքներն ամերիկ-

յան մայրցամաք տեղափոխած Արմեն Գարոյի (Փաստրնաձյան) և այլ նվիրյալների ջանքերով:

Այս բարդ ու բազմամակարդակ աշխատանքների սկզբնավորման առաջին հանգրվանում՝ 1890-1897 թթ., նորաստեղծ ՀՅ Դաշնակցության կապերն ու հարաբերությունները դրսևորվել են հիմնականում ցարական Ռուսաստանի և Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի հետ շփումների տեսքով: Դա պայմանավորված էր առաջին հերթին Ռուսաստանի հայությանը որպես թիկունք համախմբելով Արևմտյան Հայաստանում ու Օսմանյան կայսրության հիմնական կենտրոններում ներկայություն դառնալու ՀՅԴ ծրագրային առաջնահերթությամբ: Դրանով էր թելադրված նաև Անդրկովկասում և ընդհանրապես Ռուսաստանյան կայսրության ողջ տարածքում պայքարի հեղափոխական մեթոդներից զերծ մնալու և ողջ ուշադրությունը դեպի Երկիր տեղափոխելու կուսակցության ցանկությունը: Ուստի մինչև 1898 թ. ՀՅԴ 2-րդ Ընդհանուր ժողովը, եվրոպական քաղաքական իրականության հետ կուսակցության գործնական կապերն ու հարաբերությունները հիմնականում պարփակվել են Թիֆլիսից՝ Ռումինիա և ապա՝ Շվեյցարիա տեղափոխված «Դրոշակ»-ի խմբագրության սահմանափակ նախաձեռնությունների շրջագծում:

1890 թ. հիմնված «Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը» իր «Մանիֆեստ»-ի միջոցով առաջադրել էր համահայկական ցանցային կառույցի ձևավորման խնդիրը. «Դաշնակցութիւնը ձգտելու է միացնել բոլոր ուժերը, կապելով իրար հետ բոլոր կենտրոնները»<sup>8</sup>: Բնական է, որ հիմնականում հայ ազգային-նարողնիկության խանձարուրից դուրս եկած գործիչները նման համակարգի ձևավորման համար իբրև հիմք ընտրել էին ժամանակին ապակենտրոն գործելակերպ որդեգրած ռուս նարողնիկների «Զեմլյա ի վոլյա» կազմակերպության կառուցվածքը: Ավելին՝ նորաստեղծ կուսակցության «Դաշնակցություն» անվանումն անգամ խորհրդանշում էր ֆեդերալիզմի քաղաքական փիլիսոփայությունը: Ուստի բնական է, որ կուսակցության առաջին կապերը եղել են հենց իր գաղափարակիցների՝ ռուս հեղափոխական նարողնիկների հետ արդեն ՀՅ Դաշնակցության հիմնադիր ժողովների շրջանում: Դրանք ավելի շատ հետապնդել են 1881 թ.

8 «Դիւան ՀՅ Դաշնակցութեան», խմբ.: Ս. Վրացեան, հատ. 1, Պոսթըն, 1934, էջ 88-89:



մարտիմեկյան իրադարձություններից ու «Նարոդնայա վոլյա»-ի 1884 թ. մեծ ձախողումից հետո հարազատ ժողովրդի ընկերային ազատագրության դրոշը փոքր-ինչ խոնարհած ռուս հեղափոխականների փորձն օգտագործելու պրագմատիկ նպատակը:

Ռուսաստանում Մ. Տ. Լոռիս-Մելիքովի չափավոր բարեփոխումներին փոխարինած պոբեդոնոսևցյան հետադիմության դաժան ճնշումների ու սահմանափակումների պայմաններում հեղափոխական նարոդնիկությունը բրոուսյան շարժման մեջ էր հայտնվել: Իրար հետևից տեղի էին ունենում տեղական կազմակերպությունների բացահայտումներ ու դատավարություններ, որոնք ուղեկցվում էին նոր ցար Ալեքսանդր 3-ին նույնպես մահապատժի ենթարկելու հուսահատ ու անհաջող փորձերով: Նման պայմաններում հեղափոխական նարոդնիկության բազմաթիվ աքսորյալ ներկայացուցիչներ էին հաստատվել Կովկասյան երկրամասի կենտրոն Թիֆլիսում, ինչպես նաև ցարական ոստիկանության համար հարավային աքսորավայրերի դեր կատարող Նովոչերեպասկում, Օդեսայում ու Քիշնևում: Նրանց առանձին դեմքեր հաստատվել էին նաև Շվեյցարիայում, Ֆրանսիայում և այլ ազատ երկրներում: Ուստի այդ ազգությամբ ռուս, հրեա, լեհ ու վրացի նարոդնիկների հետ ՀՅԴ հիմնադիրների հաստատած քաղաքական կապերն ու անձնական մտերմությունը պահպանվեց 1890-ականների ընթացքում՝ ընդհուպ մինչև հեղափոխական նարոդնիկության կազմակերպական ու գաղափարական կացության հստակեցումը 1901-1902 թթ. տեղի ունեցած էսէռների (սոցիալիստ-հեղափոխականների) հիմնադիր ժողովներում:

Չնայած դրան, իր կազմակերպական անորոշ վիճակի հետ միասին նաև՝ գաղափարապես լիբերալ ու հեղափոխական թևերի տրոհված ռուսական նարոդնիկությունը 1890-ականներին ևս պատկառելի ուժ էր ներկայացնում: Ուստի նրա առանձին ներկայացուցիչների ունեցած հարուստ կապերն ու հնարավորություններն օգտագործվում էին ՀՅԴ-ի կողմից՝ Ռուսաստանից Անդրկովկաս գեոք-գինամթերք տեղափոխելու և 1893 թվականից «Դրոշակ»-ի թանկագին տառերով ժնևում հաստատված Ռոստոմի համար անձանոթ միջավայրում գործելու որոշակի դաշտ ապահովելու նպատակով:

Արդեն «Հայ Յեղափոխականների Դաշնակցության» հիմնադիր ժողովների շրջանում թիֆլիսյան արքայալների այս նարոդնիկական շրջանակն անդառնալիորեն կապվեց կուսակցության հետ ոչ միայն Ք. Միքայելյանի տիկնոջ՝ Ե. Լավրուսևիչ-Բաբուշկինայի, այլև լեհական ապստամբությունից հետո Երևան արքայալ լեհ սպայի ու հայուհու գավակ Վալերիան Լունկևիչի (Արարատսկի) և այլ նվիրյալ գործիչների միջոցով:

Հետագա տարիներին նույնպես Ռուսաստանում ու արտասահմանում՝ Ժնևում, Ցյուրիխում և Վիեննայում, նարոդնիկների ունեցած լայն կապերն օգտագործվեցին դաշնակցականների կողմից: Նրանց հաճախակի շփումների վայրերն էին մանավանդ «Դրոշակ»-ի խմբագրատունը Ժնևում և Ցյուրիխի համալսարանին կից գործող ռուսաց գրադարան-ընթերցարանը, որտեղ հյուրընկալված Ռուստոմը հանդիպումներ է ունեցել բազմաթիվ հեղափոխական գործիչների հետ<sup>9</sup>:

Մինչև Ռուսական առաջին հեղափոխությունը նարոդնիկական ու էսէռական բազմաթիվ կազմակերպությունների և համառուսաստանյան հարցերում նրանց գաղափարակից ՀՅ Դաշնակցության գործունեությունը մշտապես ցարական Ոստիկանության դեպարտամենտի ու նրա տեղական կառույցների ուշադրության կենտրոնում էր: Բայց Ռուսաստանում իշխող բռնապետական վարչակարգը, բացառելով քաղաքական բազմակարծությունը, այդ ուժերին ակտիվորեն թիրախավորում էր արտաքին ու ներքին մարտահրավերների կուտակման կուլմինացիոն պահերին: Արտաքին մարտահրավերների առումով նման հալածանքները կապված էին Բեռլինի կոնգրեսից հետո Ռուսաստանի քաղաքականության մեջ առաջ եկած տատանումների հետ: Դրանց բարձրակետերն էին 1891 թ. գարունը, երբ պարզ դարձավ, որ կասեցվում են Թուրքիայի դեմ նոր պատերազմի նախապատրաստությունները, 1895 թ. աշունը, երբ դեպի Հեռավոր Արևելք թեքված ցարական դիվանագիտությունը խրախուսում էր սուլթան Համիդի ջարդարարական նկրտումները և այլն: Ոստի պատահական չէ, որ նորաստեղծ ՀՅ Դաշնակցության ղեկավարության նկատմամբ սկիզբ առած հալածանքներն ու ձերբակալությունները (1891 թ. ապրիլ, 1895 թ. հոկտեմբեր և այլն) համապատասխանել են հենց այդ ժամանակա-

9 Տե՛ս Ռուստոմ, Նամականի: Մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրուք, Համազգայինի Վահէ Ալթեան տպարան, 1999, էջ 27-28:

յին պատուհաններին: Նման պահերին կուսակցությունը կարողանում էր օգտագործել նաև ցարական իշխանությունների հետ շփում ունեցող ժամանակի հայ ականավոր գործիչների (Գր. Արծրունի, Մ. Խրիմյան) պաշտոնական ու ոչ պաշտոնական կապերը՝ նրանց միջոցով ցարական իշխանությունների դիրքորոշումները պարզելու համար:

Նույնպիսի և ավելի դաժան հալածանքներ էին ձեռնարկվում նարողնիկական կազմակերպությունների հանդեպ՝ Ռուսաստանում նրանց գործունեության ակտիվացմանը զուգընթաց, ինչին հետևում էին պարբերական մեղնացումները: Սա ցույց է տալիս, որ Ռուսաստանի բռնապետական վարչակարգի պայմաններում ոչ միայն ՀՅ Դաշնակցությունը, այլև բացահայտ հեղափոխական պայքար ծավալող նարողնիկական ու սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները աստիճանաբար դառնում էին խիստ բևեռացած քաղաքական համակարգի մասնիկները, որոնց փոխադարձ ինտեգրումը հնարավոր էր ոչ այնքան հեղափոխականների արմատականության չափավորման, որքան իշխող վարչակարգի թուլացման պարագայում: ՀՅ Դաշնակցության համար դրան գումարվում էր նաև կայսրության արտաքին նախապատվությունների հստակեցման գործընթացը, քանի որ սովյալ պատմաշրջանում կուսակցության միակ քաղաքական նպատակը Օսմանյան կայսրության կազմում գտնվող Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր:

Այլ ճակատագիր էր սպասվում Օսմանյան կայսրության տարածքում հեղափոխական պայքար մղող ՀՅ Դաշնակցության կառույցներին: Այս առումով վերջին տասնամյակների գիտականամերձ մտավարժանքների առարկաներից մեկը սուլթանական կառավարությանն ընդդիմադիր երիտթուրքերի հետ հայ քաղաքական կուսակցությունների, առաջին հերթին՝ ՀՅ Դաշնակցության հարաբերությունների պատմությունն է: Թեմայի որոշ կողմերին արդեն անդրադարձել ենք պրոֆ. Արարատ Հակոբյանի հետ կազմած գրքույկում<sup>10</sup>: Սակայն վերջին շրջանում հրապարակված ՀՅԴ հիմնադիրների անտիպ նամակների, ինչպես նաև երիտթուրքական շարժման անցած հոլովույթի ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել ավելի հիմնարար եզրակացություններ: Դրանք վկայում են, որ Օսմանյան կայսրության

---

10 Տե՛ս **Խողիմյան Գ., Հակոբյան Ա.**, ՀՅ Դաշնակցության պատմության խեղաթյուրման վերջին փորձերը, Եր., 2005:

ընդդիմադիր քաղաքական ուժերի, այդ թվում՝ երիտթուրքերի հետ ՀՅԴ շփումներն ու հարաբերությունները սկիզբ են առել ոչ թե 1902 և 1907 թթ. կայացած հայտնի կոնգրեսների ժամանակ, այլ շատ ավելի վաղ շրջանում: Բայց ներկա քննության ժամանակահատվածի՝ 1890–1897 թթ. կտրվածքով դրանք դեռևս թռուցիկ հանդիպումների ու փոխգործակցության առաջարկությունների տեսք են ունեցել: Պատճառն այն է, որ 1889 թ. մայիսի 21-ին հիմնված «Օսմանյան միասնության ընկերությունը», որ փոքր-ինչ ավելի ուշ վերանվանվել է «Միության և առաջադիմության օսմանյան ընկերության», իրականում մի սովորական խմբակ է եղել, որի թե՛ փարիզյան հատվածը՝ ի դեմս իր արմատներով կիսաթուրք-կիսահունգարացի Ահմեդ Ռիզայի, և թե՛ բուն երիտթուրքական կազմակերպության հիմնադիրը համարվող ալբանացի Իբրահիմ Տեմն, ըստ էության, գրեթե կապ չեն ունեցել հետագայում Զիյա Գյոքալփի շնորհիվ համակարգված գաղափարախոսություն ձևավորած կուսակցության հետ: Ե՛վ սրանք, և՛ կարճ ժամանակ անց թուրքական ընդդիմության ճամբարը համալրած իշխան Սաբահեդդինը, որը հրատարակեց «Մեշվերեթ» թերթը, եղել են չկայացած տեսաբաններ ու սուլթանի հանդեպ անձնական վրեժխնդրությամբ լցված սովորական վտարանդիներ: Ավելին՝ նրանք այնքան թույլ են եղել ու անկազմակերպ, որ իրենք են մշտապես զգացել հայ քաղաքական ուժերի աջակցության կարիքը: Ուստի պատահական չէ, որ Ժնևում գտնվող Ռոստոմը 1896 թ. հունիսի 16 (28)-ին Թավրիզի ընկերներին գրած իր նամակում խոստովանում էր. «Տաճկական յեղափոխականների հետ յարաբերութեան մէջ ենք: Բայց դժուար թէ դրանցից բան դուրս գայ, որովհետեւ ախր դրանք դեռ եւս միայն անունով են յեղափոխական»<sup>11</sup>: Նման պայմաններում հայ քաղաքական ուժերը, առաջին հերթին՝ ՀՅ Դաշնակցությունը, ոչ միայն լուրջ չէին ընդունում թուրքական ընդդիմադիրների գործունեությունը, այլև հաճախ իրենց նպատակների համար օգտագործում էին նրանց՝ մանր-մունր խոստումներ տալով: Նման հարաբերություններն ավելի հաճախակի դարձան դաշնակցականների կողմից Օտտոմանյան բանկի գրավումից հետո, ինչը մեծ տպավորություն էր թողել սուլթանին ընդդիմադիր թուրքական շրջանակներում: Բայց, ի տարբերություն հայ հեղափոխականների, թուրքերը ոգևորվել էին ոչ թե տեղի ունե-

11 Ռոստոմ, Նամակահի, էջ 62:

ցածի քաղաքական արձագանքներից, այլ դաշնակցականների գործադրած ռումբերի առաջ բերած ավերածություններից ու արյունից: Ուստի նրանք ուղղակի թափվել էին ժնկում գտնվող Ռոստոմի գլխին՝ ցանկացած տարբերակով ռումբեր ձեռք բերելու և աղմկահարույց պայթյուններ կազմակերպելու խնդրանքներով: Ստամբուլյան պայթյունների առաջ բերած տպավորության ազդեցությամբ նրանցից անգամ անջատվում է մի հեղափոխական մարմին, որը շրջաբերական-հայտարարություն է տպագրում «Դրոշակ»-ում, միայն թե ՀՅԴ-ից ռումբեր ստանար: Բայց սկիզբ առած բանակցությունները վերածվում են ռումբեր – քաղաքական դիրքորոշումների փոփոխության դիմաց սակարկության, ուստի փոքր-ինչ շփոթված Ռոստոմը դրանից ամեն-ևին էլ չէր ոգևորվել. «Մի կողմից մենք շատ ենք ցանկանում ոյժ տալ դրանց, ստեղծել բուն յեղափոխական տարրեր, ասպարեզի վրայից քշել տալ զանազան Մուրատներին, Ահմէտ Ռիզաներին, որոնք Փարիզ նստած Երիտասարդ Թուրքիայի ներկայացուցիչների անունից ամէն տեսակ յիմարութիւններ են դուրս տալիս ընդհանրապէս եւ մեզ՝ յեղափոխականներիս նկատմամբ՝ մասնաւորապէս»<sup>12</sup>: Սակայն նամակի վերջում հիշելով, որ մոռացել է ներկայացնել իր փաստարկումների երկրորդ խումբը, տողատակում բազմիմաստ կերպով հավելում էր. «\*) Իսկ միւս կողմից (միւս կողմը մոռացել էի) զգուշանում ենք, որ դրանց շարժումը այսպէս կան այնպէս վնաս չբերի մեր հարցին»<sup>13</sup>:

Դրա համար Ռոստոմը ստիպված էր անընդհատ սահմանազատվել այդ նորահայտ «հեղափոխականներից», որոնց միացել էր Պ. Տոնապետյանի հետ Աքիայից փախած ոմն Շեֆիկ. «Բեամիլ բէյի մասին դեռ ոչինչ չենք յայտնել: Շեֆիգը քանի օր է եկել է «խոսալու»: Ստիպւած ենք խոյս տալ: Այսօրայ Mechveret-ին մէջ դրա մասին կար»<sup>14</sup>:

Մեր ձեռքի տակ եղած բազմաթիվ նման փաստերի համադրումից դժվար չէ եզրակացնել, որ տվյալ պատմաշրջանում դեռևս հեղ-հեղուկ վիճակում գտնվող և կայսրության տարածքում մշտապես գործող կառույց չունեցող<sup>15</sup> երիտթուրքերի քաղաքական շարժումը և

12 Նույն տեղում, էջ 88:

13 Նույն տեղում, էջ 89:

14 «Ռոստոմի անտիպ նամակները», հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ՝ Երուանդ Փամպուքեանի, «Վէմ» մատենաշար, թիւ 4, Եր., «Լուսակն», 2022, էջ 143:

15 Տե՛ս Ռոստոմի Բուլղարիա (Ֆիլիպպոպոլ) ուղարկած 1897 թ. հունվարի 21-ի գաղտնի գրությունը, «Ռոստոմի անտիպ նամակները», էջ 49:

այն հիմնավորող գաղափարախոսությունը համակարգված տեսք են ստացել շատ ավելի ուշ՝ սալոնիկցի թուրքացած հրեա (դյոնմե) սպաների կազմակերպած ռազմական հեղաշրջման միջոցով իշխանությանը տիրանալու և սուլթան Աբդուլ Համիդի օրոք ձևավորված պետական ինստիտուտների հետ միաձուլվելու միջոցով:

Սա ևս գալիս է վկայելու, որ ինչպես անցյալում, այնպես էլ 19-րդ դարի վերջերին, ի տարբերություն Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների, թուրքերն ունեին միայն մեկ քաղաքական ինստիտուտ՝ **պետությունը** որպես բռնապետական համակարգ, ինչը նրանց և՛ թուլությունն էր, և՛ առավելությունը: Ուստի 1890-ականներին թուրք «հեղափոխականներին» մատների վրա խաղացնող ու ծաղրող Ռոստոմը հետագայում՝ Մեծ եղեռնի նախօրեին, իզուր չէր դառնությամբ խոստովանում Սիմոն Վրացյանին՝ **թուրքը պետության շունն է**:

Պատահական չէր նաև, որ Օտտոմանյան բանկի գրավումից հետո, սուլթանին ընդդիմադիր թուրքական շրջանակներից բացի, ՀՅ Դաշնակցության հետ որոշակի հարաբերություններ հաստատելու փորձեր արեցին նաև Օսմանյան կայսրության կառավարական շրջանակները: Դրանք մարտավարական քայլեր էին, որոնք իրականացվում էին Կ. Պոլսի նոր պատրիարք Մ. Օրմանյանի ներկայացուցիչներին ու մեծահարուստ ամիրա Տատյաններին բանակցային գործընթացում ներգրավելու, բարեփոխումների խոստումներ տալու և հանդարտության կոչեր անելու միջոցով: Նրանց ներկայացուցիչների ժնև այցելելու և ՀՅ Դաշնակցության գործիչների հետ հանդիպելու մասին վկայող բազմաթիվ տեղեկություններ կան Ռոստոմի նամակներում: Անշուշտ, վերջինս Թիֆլիսին գեկուցում էր նման խոսակցությունների մասին, սակայն ՀՅԴ-ի համար առանց այդ էլ պարզ էր, որ, հայ ազատամարտի ուժականությունը կոտրելուց բացի, նման փորձերը նպատակ ունեին ապակողմնորոշելու եվրոպական հանրությանը 1899 թ. հոլանդական Լա Հեյում նախատեսվող միջազգային խորհրդածողովից առաջ:

Արդեն նշել ենք, որ դեռևս «Հայ Յեղափոխականների Դաշնակցության» գոյության շրջանում՝ 1891-1892 թթ., հայ ազատամարտի գործիչները, հիմնականում՝ հնչակյանները, որոշակի փոխգործակցություն էին սկսել հունական «Արևելյան Դաշնակցության» հետ: Նրանց ջանքերով ու «Արևելյան Դաշնակցության» ղեկավարներ Լեոնիդաս

Վուլգարիսի և Հունաստանի ազգային հերոս Մարկոս Բոցարիսի եղբոր՝ տարիքն առած գեներալ Բոցարիսի մասնակցությամբ 1891 թ. Աթենքում նշվել է անգամ Գում Գափուի ցույցի առաջին տարեդարձը: Սակայն կարճ ժամանակ անց հայ ազգային կուսակցությունների միության խնդրի՝ փակուղի մտնելու և հնչակյանների հետ հարաբերությունների խզման հետևանքով սահմանափակվեցին նման կապերի հետագա ընդլայնման հնարավորությունները<sup>16</sup>: Բայց վերջերս հայտնաբերված փաստաթղթերը, մասնավորապես՝ ՀՅԴ Կենտրոնական արխիվի «Պատճենների մատյանի» գաղտնագերծված գրությունները, ցույց են տալիս, որ 1890-ականներին ՀՅԴ-ն շարունակել է իր գործակցությունը հույն հայրենասերների հետ՝ 1894 թվականից բալկանյան երկրներում որպես ՀՅԴ գործիչ հաստատված Գարեգին Խաժակի (Բաբա Գասպար) միջոցով: Մինչ այդ՝ «Հայ Յեղափոխականների Դաշնակցության» գոյության շրջանում, Բալկաններում Կոստանդին Խատիսյանի ձևավորած թռուցիկ կապերը և անգամ բուլղարական Ռուսչուկում (Ռուսե) ռուսների արտադրություն սկսելու փորձերը ավելի շատ աղմուկի ու դիվանագիտական գրագրության պատճառ էին դարձել, քան իրական արդյունքներ տվել: Դրանից հետո 1893 թ., ռումիանական Գալացից «Դրոշակ»-ի տպագրության տառերը ոստիկանության ձանկերից փրկած ու ժնև հասցրած, իսկ մեկ տարի անց՝ 1894 թ. նոյեմբերին, բուլղարացի անարխիստ Պարասկև Ստոյանովի հետ հանդիպելու համար կրկին Գալաց ժամանած ու դեկտեմբերի 2 (14)-ին ձերբակալված Ռոստոմի բալկանյան ողիսականը պայմանավորված էր սոսկ Կ. Պոլիս մուտք գործելու մտադրությամբ: Բայց հետագայում՝ 1897 թ. փետրվարի 19-ին նա տեղեկացնում էր, որ «Խաժակեանը բանակցութիւնների մէջ է մտել «Կրէտական եւ մակեդոնական ընդհանուր կոմիտէին» գործադիր անդամ «Ժան Կարտալիսի» հետ: Ժան Կարտալիս պէտք է դիմի Աթէնքի կոմիտէին, իսկ Խաժակը մեզ եւ արտասահմանեան բիւրոյին եւ հարցնեն նրանց եւ մեր ցանկութիւնը բանակցելու: Խաժակի խորհրդով մենք պէտք է պատասխանենք իրեն, թէ պատրաստ ենք բանակցելու, որպէս զի նա այդ յայտնի իրենց: Մեր կարծիքն այն է, որ մենք օգնել կրէտացիներին չենք կարող, նրանք մեզ օգնել կարող են, բայց կ'անե՞ն արդեօք, այդ շատ կասկածելի է: Բայց որովհետեւ Ժան Կարտալիսը մակեդոնական

16 Տե՛ս Ռուբէն Խան-Ազատ, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք», Պոսթըն, 1928, N 4, էջ 132-134:

շարժման մեջ էլ (է) մասնակցում, հարցրեք նրա մասին Մակեդոնական կոմիտեին»<sup>17</sup>:

Կրետեի հարցի առնչությամբ 1897 թ. բռնկված պատերազմում Հունաստանի պարտությունից հետո ՀՅԴ-ն շարունակեց իր գործակցությունը ավելի շատ ոչ թե հույն գործիչների, այլ Բուլղարիայում հիմնված Մակեդոնական կոմիտեի ու բուն Մակեդոնիայում վերելք ապրող հայդուկային շարժումը գլխավորող Ներքին մակեդոնական հեղափոխական կազմակերպության (BMPO) հետ, որոնց հերոսական ջանքերով, ինչպես հետագայում հայ բանաստեղծն էր գրում, «Մակեդոնիա իմ եղբայրս իմ խաչովս պսակուեց»:

Այս գործընթացը ծավալվել ու ընդլայնվել է 1898 թ. կայացած ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովի ընդունած պատմական որոշումների հիման վրա և դուրս է ներկա հրապարակման ժամանակագրական շրջանակներից, ուստիև այդ ամենին կանդրադառնանք մեր ուսումնասիրության երկրորդ մասում:

**Գևորգ Ս. Խուդինյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է հայոց նոր պատմության առանցքային հիմնահարցերը, այդ թվում՝ հայ ազգային-ազատագրական շարժման, Հայկական հարցի և Հայաստանի Հանրապետության պատմությունը: Հրապարակել է բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ հայ ազգային կուսակցությունների և առաջին հերթին ՀՅԴ պատմության ու գաղափարաբանության վերաբերյալ: Զբաղվում է նաև պատմագրության և պատմության տեսության ու մեթոդաբանության հիմնախնդիրների հետազոտությամբ:

Էլ. հասցե՝ khoudinyan@yahoo.com

17 «Որստոմի անտիպ նամակները», էջ 81-82:



## Summary

# AR FEDERATION (DASHNAKTSUTYUN) IN THE POLITICAL SYSTEM OF EASTERN EUROPEAN AND NEAR ASIAN COUNTRIES IN THE LATE 19TH-EARLY 20TH CENTURY

Part One: The process of formation of parties in Eastern Europe and Near East in the 1880s-1890s

Gevorg S. Khoudinyan  
*Doctor of Sciences in History*

**Keywords** – AR Federation (Dashnaktsutyun), Eastern Europe, Near East, second round, “nationalization” of progress, national histories, “challenge-response”, Macedonia, Russian Narodniks, Young Turks.

The profound geopolitical shifts that are taking place in Europe and the Near East as a result of the entry of Russian troops into Ukraine are expanding our understanding of the region called “Eastern Europe” before our eyes. A new environment is being created for all countries from the Baltic to the Mediterranean Sea and the Near East, which were once part of the Russian, Austro-Hungarian and Ottoman empires. The second stage or cycle of crystallization of the national aspirations of the peoples of this world-wide region begins.

As a result, there was a need for a more in-depth study of the first stage of this process, in which, in the late 19th and early 20th centuries, national parties were the main subjects of national aspirations of the countries and peoples of the region in the whole region from the Baltic to the Mediterranean Sea and the Near East. Therefore, the process of almost simultaneous emergence of national parties in these countries and peoples is not the result of a worldwide conspiracy, but a reflection of the objective regularity that A. Toynbee once characterized with simple concepts of **challenge-response**.

The author examines the national histories of national parties, which at the end of the First World War laid the foundations of statehood in the countries of Eastern Europe and Near Asia in a single channel of self-determination of peoples and the emergence of national states – giving a characteristic of each of its subjects. In the Armenian political reality, this process in 1890-1892 was led by

AR Federation (Dashnaktsutyun), in Macedonia, which also fought against the Ottoman yoke, the Internal Macedonian Revolutionary Organization (1893).

It is no coincidence that it was then – in the late 1880s-early 1890s that the first circles of the Young Turks appeared in Turkish reality, which reflected the same process with the help of social Darwinist ideas of the struggle for the existence of biological species, because the pan-Islamism of the new Ottomans was gradually replaced by pan-Turkism, which was based on pagan ideas of nomadic Turkic tribes in a civilizational environment alien to them.

During the same period, the movement of the inhabitants of Crete intensified for the implementation of the so-called Megali idea of uniting the Greek population of the subject territories of the Ottoman Empire with Greece, which also included ethnic Macedonians and Albanians.

Another major center of inter-national friction contributing to the formation of national parties in Eastern Europe in the early 1890s was Galicia as the former territory of the Polish-Lithuanian Commonwealth, part of the Austro-Hungarian Empire. The article analyzes the process of the emergence of the main Polish and Ukrainian national parties – the Polish Socialist Party (1892) and the Russian-Ukrainian Radical Party (1890).

At the end of the study, the political ties of the AR Federation (Dashnaktsutyun) with individual representatives of the populist movement in the Caucasus and the first contacts with Young Turk figures in Geneva in the period 1890-1897 are revealed.

**Резюме**

**АРФ ДАШНАКЦУТЮН В ПОЛИТИЧЕСКИХ СИСТЕМАХ  
ВОСТОЧНОЕВРОПЕЙСКИХ И  
ПЕРЕДНЕАЗИАТСКИХ СТРАН В КОНЦЕ XIX - НАЧАЛЕ XX ВВ.**

Часть первая: процесс формирования  
партий в Восточной Европе и Передней Азии в 1880-1890-ые годы

Геворк С. Худинян  
*Доктор ист. наук*

**Ключевые слова** – АРФ Дашнакцутюн, Восточная Европа, Передняя Азия, второй этап, «национализация» прогресса, национальные истории, «вызов-ответ», Македония, русские народники, младотурки.

Глубинные геополитические процессы, происходящие в Европе и Передней Азии в результате вхождения российских войск в Украину, на наших гла-

зах расширяют представление о регионе под названием «Восточная Европа».

Создается новая политическая обстановка для всех стран от Балтийского до Средиземного моря и Передней Азии, которые некогда входили в состав Российской, Австро - Венгерской и Османской империй. Начинается второй этап или цикл кристаллизации национальных устремлений народов данного обширного региона.

В связи с этим возникла необходимость более глубокого исследования первого этапа данного процесса, в котором в конце XIX-начале XX вв. на обширном регионе от Балтийского до Средиземного моря и Передней Азии основными субъектами национальных устремлений стран и народов являлись национальные партии. Поэтому процесс почти одновременного возникновения национальных партий в этих странах не является результатом всемирного заговора, а лишь отражением той объективной закономерности, которую А. Тойнби в свое время охарактеризовал простым понятием «**ВЫЗОВ-ОТВЕТ**».

История национальных партий, которые в конце Первой мировой войны положили основы государственности в странах Восточной Европы и Передней Азии автор рассматривает в едином русле самоопределения народов и зарождения национальных государств, давая характеристику каждого из его субъектов. В армянской политической действительности данный процесс 1890-1892 гг. возглавила АРФ Дашнакцутюн, в Македонии которая также боролась против османского ига – Внутренняя Македонская революционная организация (1893 г.).

Неслучайно, что именно тогда – в конце 1880-х - начале 1890-х гг. в турецкой действительности возникли первые кружки младотурок, программа которых отражала тот же процесс с помощью социал-дарвинистских представлений борьбы за существование биологических видов, потому что панисламизм новых османов постепенно сменялся пантюркизмом, в основе которого лежали языческие представления кочевых тюркских племен, оказавшихся в чуждой им цивилизационной среде.

В этот же период активизировалось движение жителей Крита за осуществление т.н. «Мегали идеи» - объединения греческого населения подвластных Османской империи территорий с Грецией, в которую входили также этнические македонцы и албанцы.

Другим крупным центром межнациональных трений, способствующих процессу формирования национальных партий в Восточной Европе в начале 1890-х гг., была Галиция – бывшая территория Речи Посполитой, входящая в состав Австро-Венгерской империи.

В статье дается анализ процесса возникновения основных польских и украинских национальных партий – Польской социалистической партии (1893 г.) и Русско-Украинской радикальной партии (1890 г.).

В конце исследования раскрываются политические связи АРФ Дашнакцутюн с отдельными представителями народнического движения на Кавказе.

Представлены также первые контакты с младотурецкими деятелями в Женеве - во второй половине 1890-х годов.

## REFERENCES

1. “Diwan HY Dashnaks‘ut‘ean”, khmb.՝ S. Vrats‘ean, hat. 1, Post‘ĕn, 1934 **(In Armenian)**.
2. “Rostomi antip namaknerĕ”, hratarakut‘ean patrastut‘iwn, khmbagrut‘iwn yew tsanōt‘agrut‘iwnner՝ Yeruand P‘ampuk‘eani, “Vĕm” matenashar, t‘iw 4, Yer., “Lusakn”, 2022 **(In Armenian)**.
3. **Galustyan R.**, Sots‘ial-darvinizmĕ yeritt‘urk‘eri ashkharhayats‘k‘um, “Vĕm”, Yer., 2020, N 4, ĕj 253-2173 **(In Armenian)**.
4. **Khudinyan G., Hakobyan A.**, HY Dashnaks‘ut‘yan patmut‘yan kheghat‘yurman verjin p‘ordzerĕ, Yer., 2005 **(In Armenian)**.
5. **Khudinyan G.**, HY Dashnaks‘ut‘yan k‘nnakan patmut‘yun (akunk‘nerits‘ minch‘ev 1895 t‘vakani verjerĕ), Yer., 2006 **(In Armenian)**.
6. **Khudinyan G.**, Kazimir Zalevski, Azgayin kusaks‘ut‘yunnerĕ Rusastanum, “Vĕm”, Yer., 2017, N 2, ĕj 208-213 **(In Armenian)**.
7. **Labauri D. O.**, Bolgarskoje nacional‘noje dvizhenije v Makedonii I Frakii v 1894-1908 gg.: ideologija, programma, praktika politicheskoi bor‘by, Avtoreferat dissertacii na soiskanije ychyonoj stepeni kandidata istoricheskix nauk, Jekaterinburg, 2007 **(In Russian)**.
8. **Petrunina O. Je.**, “Velikaja ideja” I geopoliticheskaja situacija na Balkanax na rubezhe xx-xxi vekov, updates@academia-mail.com **(In Russian)**.
9. **Rostom**, Namakani: Mahuan ut‘sunameaki art‘iw, Pĕyruť, Hamazgayini Vahĕ Sĕť‘ean tparan, 1899 **(In Armenian)**.
10. **Rubĕn Khan-Azat**, Hay yeghap‘okhakani yusherits‘, “Hayrenik՝”, Post‘ĕn, 1928, N 4 **(In Armenian)**.
11. **Xvostov V. M.**, Vneshnjaja politika Rossii ot okonchanija Berlinskogo kongressa do zakljuchenija franko-russkogo sojuza (1878-1893 gg.), v kn. “Problemy istorii vneshnej politiki Rossii I mezhdunarodnyx otnoshenij v konce 19 – nachale 20 v.”, “Izbrannyje trudy”, M., izd-vo “Nauka”, 1977 **(In Russian)**.
12. **Zalevskij K.**, Nacional‘nyje partii v Rossii: Nachalo 20-ogo veka: Pol‘sha. Pribaltijskij kraj. Litva. Ukraina. Kavkaz. Jevrejskije partii, Izdanije vtoroje, M., URSS, 2017 **(In Russian)**.